

Կազմված է «_17_» _____ 09 _____ 2020թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴՀԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՕՐԻՆԱԿ- 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀՀ ԻՐԱՎԱՔԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԻՑ

ԱՐՎԵՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«_09_» _____ 11 _____ 2017թ.

«_17_» _____ 09 _____ 2020թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.190.992330

ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՐԿ ԿՃԱՐՈՂԻ ՀԱԾՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

09425961

«_09_» _____ 11 _____ 2017թ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ



Գ Գ Ա Ս Յ Ա Ն

0012 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է:

ՀՀ ԻՐԱՎԱՔԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԻՑ

25 «Ապրիլ» _____ 2021 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»

հիմնադրամի կապանի մասնաճյուղի արհեստակցական

կազմակերպության

(Նոր խմբագրություն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) արհեստակցական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Մասնաճյուղի աշխատողների հիմնադրած հասարակական միավորում է, որն օրենքով սահմանված կարգով և ազատ կամքի դրսևորումով միավորում է Մասնաճյուղի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին՝ իրենց աշխատանքային ու դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով:
2. Կազմակերպության անվանումն է՝
 - 1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպություն,
 - 2) հայերեն կրճատ՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպություն,
 - 3) ռուսերեն լրիվ՝ Профсоюзная организация Капанского филиала фонда «Национальный политехнический университет Армении»,
 - 4) ռուսերեն կրճատ՝ Профсоюзная организация Капанского филиала НПУА,
 - 5) անգլերեն լրիվ՝ Professional Organization of Kapan branch of «National Polytechnic University of Armenia» Foundation,
 - 6) անգլերեն կրճատ՝ Professional Organization of Kapan branch of NPUA:
3. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Կապան, 3307, Բաղաբերդ 28:
4. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
5. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝
 - ա) պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից, քաղաքական, հասարակական և այլ կազմակերպություններից անկախությունը,
 - բ) արհեստակցական միություններին մասնակցելու (անդամակցելու) կամավորությունը,
 - գ) արհեստակցական միությունների իրավահավասարությունը,
 - դ) աշխատողի իրավունքների սահմանափակում թույլ չտալը՝ կապված նրա՝ արհեստակցական միության մասնակից (անդամ) լինելու հանգամանքի հետ:
6. Կազմակերպությունն անկախ է պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, Մասնաճյուղից, այլ կազմակերպություններից և կուսակցություններից, նրանց հաշվետու չէ և նրանց կողմից վերահսկողության ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
7. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան կարող է համագործակցել այլ արհեստակցական կազմակերպությունների, միությունների, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային և այլ երկրների արհեստակցական միությունների ու այլ հասարակական միավորումների հետ:
8. Կազմակերպության հարաբերությունները Մասնաճյուղի՝ ի դեմս Մասնաճյուղի տնօրենի (այսուհետ՝ տնօրեն) հետ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, պայմանագրերով և համաձայնագրերով:
9. Կազմակերպությունն իրավաբանական անձ է, ստեղծված է համարվում պետական գրանցման պահից և գործում է անժամկետ:
10. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացելու Հայաստանի Հանրապետության բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

11. Կազմակերպությունը կարող է ունենալ իր հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումը պարունակող կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:
12. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կառուցվածքը, ընտրում ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ, հրավիրում համաժողովներ և կազմակերպության այլ մարմինների նիստեր, կազմակերպում իր գործունեությունը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. Կազմակերպության նպատակներն են.
 - 1) ներկայացնել և պաշտպանել Մասնաճյուղի աշխատողների (այսուհետ՝ աշխատող) աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական ու այլ շահերը և իրավունքները Մասնաճյուղի և (կամ) երրորդ անձի մոտ,
 - 2) սոցիալական գործընկերության տարբեր մակարդակներում ապահովել աշխատողների և Մասնաճյուղի շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում,
 - 3) Մասնաճյուղին ներկայացնել առաջարկություններ՝ աշխատողների աշխատանքի, սոցիալական և հանգստի պայմանների բարելավման, աշխատանքի վարձատրության չափի և կարգի վերաբերյալ,
 - 4) Մասնաճյուղի հետ համագործակցել Կազմակերպության անդամի պարզևատրման և խրախուսման, սոցիալական օգնության հարցերում,
 - 5) Մասնաճյուղի ներկայացմամբ քննարկել աշխատանքային կարգապահության խախտում թույլ տված Կազմակերպության անդամի հարցը:
14. Կազմակերպության խնդիրներն են.
 - 1) միավորել և համակարգել Կազմակերպության անդամների գործողությունները Կազմակերպության նպատակների իրականացման համար,
 - 2) ներկայացնել աշխատողների շահերը և պաշտպանել նրանց իրավունքները,
 - 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վերահսկել Մասնաճյուղում աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը,
 - 4) նպատակաուղղել Կազմակերպության միջոցները Կազմակերպության անդամների համար դրամական օգնության տրամադրման, առողջարաններում և հանգստյան տներում բուժման ու հանգստի, սոցիալական օգնության ծրագրերի իրականացմանը, մշակութային, մարզական և այլ միջոցառումների կազմակերպմանը, աշխատողների իրավունքների և շահերի պաշտպանությանը,
 - 5) մշակել և Մասնաճյուղին ներկայացնել առաջարկություններ աշխատողների աշխատանքի, սոցիալական և հանգստի պայմանների բարելավման վերաբերյալ,
 - 6) աջակցել աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման, սոցիալական օգնության նպատակներով Մասնաճյուղի ծրագրերին:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Կազմակերպությունն իր կանոնադրական նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար իրավունք ունի.
 - 1) ինքնուրույն որոշել իր կառուցվածքը,
 - 2) մշակել և հաստատել իր կանոնադրությունը, կարգերը ու կանոնակարգերը,
 - 3) կազմակերպել իր գործունեությունը, կազմել իր ծրագրերը,
 - 4) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան կնքել պայմանագրեր և համաձայնագրեր,
 - 5) ի դեմս իր ղեկավար մարմնի կամ ներկայացուցչի՝ Մասնաճյուղի հետ վարել կոլեկտիվ բանակցություններ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

- կարգով կնքել (վերակնքել) կոլեկտիվ պայմանագիր, իրականացնել կոլեկտիվ պայմանագրի կատարման հսկողությունը,
- 6) մասնակցել կոլեկտիվ և (կամ) անհատական աշխատանքային վեճերի կարգավորմանը, ներկայացնել աշխատողների շահերը և պաշտպանել նրանց իրավունքները Մասնաճյուղի կառավարման մարմիններում, պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և այլ կազմակերպություններում ու մարմիններում,
 - 7) մասնակցել աշխատողների աշխատանքային, մասնագիտական, սոցիալական և տնտեսական շահերը շոշափող Մասնաճյուղի ներքին իրավական ակտերի մշակման և փորձաքննական աշխատանքներին,
 - 8) մասնակցել աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման, սոցիալական աջակցության նպատակով Մասնաճյուղում իրականացվող ծրագրերին,
 - 9) Կազմակերպության միջոցներով Կազմակերպության անդամներին տրամադրել դրամական օգնություն, նրանց համար կազմակերպել և իրականացնել առողջարաններում և հանգստյան տներում բուժման ու հանգստի, սոցիալական օգնության ծրագրեր, մշակութային, մարզական և այլ միջոցառումներ,
 - 10) լուսաբանել իր գործունեությունը,
 - 11) Կազմակերպության անդամի իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով միջնորդագրերով դիմել Մասնաճյուղին, պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին կամ այլ անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով բողոքարկելու նրանց գործողությունները (անգործությունը),
 - 12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:
16. Կազմակերպությունը պարտավոր է՝
- 1) գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան,
 - 2) հրապարակել իր գործունեության մասին ամենամյա հաշվետվությունը և վերահսկողություն իրականացնող մարմնի ամենամյա ստուգումների հաշվետվությունը,
 - 3) սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
 - 4) ապահովել սույն կետում նշված հաշվետվություններին և վերահսկողություն իրականացնող մարմնի ստուգումների ակտերին ծանոթանալու մատչելիությունը,
 - 5) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:
17. Կոլեկտիվ կամ այլ պարտավորություններ չկատարելու, անօրինական գործադուլներ և այլ միջոցառումներ կազմակերպելու ու անցկացնելու համար Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

18. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպչական կառուցվածքը և հաստատում կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը:
19. Կազմակերպությունը ունի 3 կառուցվածքային ստորաբաժանում:
20. Կազմակերպության անդամների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ինչպես նաև իր ծրագրերն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով Կազմակերպությունը կարող է ստեղծել մշտական և (կամ) ժամանակավոր հանձնաժողովներ:
21. Կազմակերպության կառավարման մարմիններն են. Կազմակերպության համաժողովը (այսուհետ՝ համաժողով), Կազմակերպության կոմիտեն (այսուհետ՝ արհկոմիտե), Կազմակերպության նախագահը:
22. Կազմակերպության վերահսկողություն իրականացնող մարմինը Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովն է (այսուհետ՝ Վերահսկիչ հանձնաժողով):

Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ

23. Կազմակերպության բարձրագույն մարմինը նրա համաժողովն է, որը հրավիրվում է սույն կանոնադրությունում սահմանված կարգով և ժամկետներում:
24. Համաժողովը հրավիրվում է տարեկան մեկ անգամ՝ Կազմակերպության նախագահի կամ արհկոմիտեի որոշմամբ:
25. Համաժողովի օրակարգի նախագծի, անցկացման տեղի և ժամկետի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են համաժողովից առնվազն մեկ շաբաթ առաջ:
26. Անհրաժեշտության դեպքում սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է գումարվել արտահերթ համաժողով:
27. Արտահերթ համաժողովը հրավիրվում է.
 - 1) Կազմակերպության նախագահի որոշմամբ,
 - 2) արհկոմիտեի որոշմամբ,
 - 3) արհկոմիտեի անդամների առնվազն 1/3-ի պահանջով,
 - 4) Վերահսկիչ հանձնաժողովի պահանջով (առաջարկով),
 - 5) Կազմակերպության անդամների առնվազն 1/3-ի պահանջով,
 - 6) կառուցվածքային ստորաբաժանումներից առնվազն մեկի պահանջով (առաջարկով),
 - 7) Կազմակերպության քարտուղարի կողմից՝ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքում,
 - 8) նախաձեռնող խմբի կողմից՝ սույն կանոնադրության 95-րդ կետով սահմանված դեպքերում:
28. Արտահերթ համաժողովի օրակարգի նախագծի, անցկացման տեղի և ժամկետի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են համաժողովից առնվազն երեք օր առաջ:
29. Կազմակերպության նախագահն առաջարկվող օրակարգի նախագծով արտահերթ համաժողով հրավիրելու վերաբերյալ պահանջն (առաջարկն) ստանալուց հետո տասնօրյա ժամկետում պարտավոր է ապահովել համաժողովի գումարումը:
30. Համաժողովը համարվում է իրավագործ՝ Կազմակերպության անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:
31. Համաժողովի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի:
32. Քվեարկության կարգը՝ բաց կամ փակ (գաղտնի), որոշում է համաժողովը, բացառությամբ սույն կանոնադրությունով սահմանված փակ (գաղտնի) քվեարկության դեպքերի:
33. Համաժողովը արձանագրվում է: Համաժողովի արձանագրությունները, որոշումները, արձանագրություններից քաղվածքները ստորագրվում են Կազմակերպության նախագահի և քարտուղարի կողմից:
34. Համաժողովի որոշումների կատարումը պարտադիր է Կազմակերպության բոլոր անդամների համար:
35. Համաժողովի իրավասություններն են.
 - 1) Կազմակերպության գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը,
 - 2) Կազմակերպության կանոնադրության հաստատումը, կանոնադրությունում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխության, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,
 - 3) իր օրակարգի և աշխատակարգի հաստատումը,
 - 4) Կազմակերպության տարեկան գործունեության մասին հաշվետվության քննարկումը և գնահատումը,
 - 5) Կազմակերպության տարեկան բյուջեի նախահաշվի ու կատարողականի քննարկումը և հաստատումը, բյուջեի նախահաշվում փոփոխությունների կատարումը,
 - 6) Կազմակերպության սեփականության օգտագործման տարեկան հաշվետվության հաստատումը,

- 7) 100 000 ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի կնքման մասին որոշումների ընդունումը,
 - 8) Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից երաշխավորված թեկնածուներից Կազմակերպության նախագահի ընտրությունը,
 - 9) Վերահսկիչ հանձնաժողովի կազմի հաստատումը,
 - 10) արհկոմիտեի կազմի հաստատումը,
 - 11) Կազմակերպության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, բացառությամբ՝ սույն կանոնադրության 95-րդ կետով սահմանված դեպքերի,
 - 12) արհկոմիտեի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, բացառությամբ սույն կանոնադրության 95-րդ կետով սահմանված դեպքերի,
 - 13) Վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - 14) Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվության արդյունքների ամփոփումը,
 - 15) Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը,
 - 16) կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարման, վերանվանման կամ վերակազմակերպման վերաբերյալ որոշումների ընդունումը,
 - 17) կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի, Կազմակերպության այլ կանոնակարգերի և կարգերի հաստատումը, կանոնակարգերում և կարգերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կանոնակարգերի և կարգերի փոփոխության, նոր խմբագրությամբ կանոնակարգեր և կարգեր հաստատելու մասին որոշումների ընդունումը,
 - 18) Կազմակերպության նախագահի, արհկոմիտեի և կառուցվածքային ստորաբաժանման ժողովի սույն կանոնադրության խախտմամբ ընդունված որոշումներն ուժը կորցրած ճանաչելը,
 - 19) Կազմակերպության մշտական և (կամ) ժամանակավոր հանձնաժողովների ստեղծումը, դրանց կառուցվածքի սահմանումը, կազմերի ձևավորման կարգի և աշխատակարգի հաստատումը, դրանց գործունեության մասին հաշվետվությունների քննարկումը և գնահատումը,
 - 20) անհրաժեշտության դեպքում աշխատողների աշխատանքային, մասնագիտական, սոցիալական և տնտեսական շահերը շոշափող Մասնաճյուղի ներքին իրավական ակտերի մասին Կազմակերպության համապատասխան որոշման ընդունումը,
 - 21) Կազմակերպության անդամության մուտքի վճարի, անդամավճարի և դրանց վճարման կարգի սահմանումը,
 - 22) կոլեկտիվ աշխատանքային վեճ ի հայտ գալու դեպքում կոլեկտիվ գործողություններ, այդ թվում նաև՝ գործադուլ, կազմակերպելու մասին որոշումների ընդունումը,
 - 23) Մասնաճյուղի հետ կոլեկտիվ պայմանագիր կնքելու (վերակնքելու) մասին որոշման ընդունումը, կոլեկտիվ պայմանագրի նախագծի քննարկումը և համապատասխան որոշման ընդունումը,
 - 24) Մասնաճյուղում կոլեկտիվ պայմանագրի կատարման վերաբերյալ (պայմանագրի առկայության դեպքում) Կազմակերպության նախագահի հաշվետվության քննարկումը և համապատասխան որոշման ընդունումը,
 - 25) Կազմակերպության անդամների խրախուսման և կարգապահական տույժի ենթարկման մասին որոշումների ընդունումը,
 - 26) սույն կանոնադրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող դիմումների, հայտարարությունների և որոշումների ընդունումը,
 - 27) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված և Կազմակերպության մյուս մարմիններին սույն կանոնադրությամբ չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:
36. Համաժողովը կարող է անցկացվել նաև էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով՝ Կազմակերպության նախագահի որոշմամբ:

37. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով համաժողովն իր իրավասությունների սահմաններում որոշում կարող է ընդունել ցանկացած հարցի վերաբերյալ, բացառությամբ՝ Կազմակերպության նախագահի, արհկոմիտեի և Վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցերի վերաբերյալ և այն հարցերի, որոնց համար սույն կանոնադրությամբ բացառապես սահմանված է որոշում ընդունել փակ գաղտնի քվեարկությամբ:
38. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով համաժողովը համարվում է իրավազոր՝ եթե քննարկվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում են ներկայացրել Կազմակերպության անդամների առնվազն 2/3-ը:
39. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ համաժողով գումարելու նպատակով Կազմակերպության նախագահի առաջարկությամբ Կազմակերպության քարտուղարը էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ համաժողովի անցկացման ժամկետի և օրակարգի նախագծի վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում Կազմակերպության անդամներին՝ կցելով դիտարկվող հարցերի վերաբերյալ առաջարկվող որոշման նախագծերը և անհրաժեշտ հիմնավորումները:
40. Հարցման միջոցով համաժողով գումարելու դեպքում, Կազմակերպության քարտուղարը Կազմակերպության անդամներին համաժողովի օրակարգին, որոշման նախագծին, ինչպես նաև անհրաժեշտ հիմնավորումներին ծանոթացնում է հարցման ընթացքում:
41. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով համաժողովի անցկացման դեպքում համաժողովի մասնակիցը ներկայացված հարցերի վերաբերյալ կարող է քվեարկել՝ «Կողմ», «Դեմ» կամ «Ձեռնպահ», որի հիմքով Կազմակերպության քարտուղարը կազմում է արձանագրություն: Որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

Ա Ր Հ Կ Ո Մ Ի Տ Ե

42. Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում Կազմակերպության մշտական գործող կոլեգիալ մարմինը հանդիսանում է արհկոմիտեն, որի կազմը բաղկացած է 7 հոգուց և հաստատվում է համաժողովում բաց քվեարկությամբ՝ երկու տարի ժամկետով, Կազմակերպության նախագահի և յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանումից երկուական ներկայացուցիչ սկզբունքով:
43. Տնօրենը, տնօրենի տեղակալները, Մասնաճյուղի ֆակուլտետների ղեկանները և Կազմակերպության այն անդամը, ում հիմնական աշխատավայրը չի հանդիսանում Մասնաճյուղը չեն կարող լինել արհկոմիտեի անդամ:
44. Արհկոմիտեն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ:
45. Նիստի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին արհկոմիտեի անդամները տեղեկացվում են նիստից առնվազն երեք օր առաջ:
46. Արհկոմիտեի նիստ հրավիրվում է.
 - 1) Կազմակերպության նախագահի որոշմամբ,
 - 2) Վերահսկիչ հանձնաժողովի պահանջով (առաջարկով),
 - 3) արհկոմիտեի անդամների առնվազն 1/3-ի պահանջով,
 - 4) կառուցվածքային ստորաբաժանումներից առնվազն մեկի պահանջով (առաջարկով):
47. Կազմակերպության նախագահն առաջարկվող օրակարգով արհկոմիտեի նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն (առաջարկը) ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:
48. Արհկոմիտեի նիստը համարվում է իրավազոր՝ արհկոմիտեի անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:
49. Նիստում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ

մեծամասնությամբ:

50. Արհկոմիտեի նիստերը արձանագրվում են:
51. Արհկոմիտեի նիստերի արձանագրությունները, որոշումները, արձանագրություններից քաղվածքները ստորագրվում են Կազմակերպության նախագահի և քարտուղարի կողմից:
52. Արհկոմիտեն.
 - 1) ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը,
 - 2) հրավիրում է համաժողով, հաստատում օրակարգի նախագիծը, անցկացման տեղը և ժամկետը,
 - 3) իրագործում է համաժողովի որոշումները, սույն կանոնադրության պահանջները,
 - 4) հաշվետու է համաժողովին,
 - 5) հաստատում է իր օրակարգը և աշխատակարգը,
 - 6) քննարկում և համաժողովին է ներկայացնում առաջարկություններ՝ Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կանոնադրության փոփոխության, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու վերաբերյալ,
 - 7) մշակում և համաժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության կանոնակարգերը և կարգերը,
 - 8) քննարկում և համաժողովին է ներկայացնում առաջարկություններ՝ Կազմակերպության կանոնակարգերում և կարգերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կանոնակարգերի և կարգերի փոփոխության, նոր խմբագրությամբ կանոնակարգեր և կարգեր հաստատելու վերաբերյալ,
 - 9) քննարկում և համաժողովի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության տարեկան բյուջեի նախահաշվի նախագիծն ու բյուջեի կատարողականը, բյուջեի նախահաշվում փոփոխությունների նախագիծը,
 - 10) իր գործունեության մասին եռամսյա պարբերականությամբ իրազեկում է Կազմակերպության անդամներին՝ հրապարակելով այն Մասնաճյուղի պաշտոնական կայքում,
 - 11) քննարկում է Կազմակերպության նախագահի կողմից համաժողովին ներկայացվող Կազմակերպության սեփականության օգտագործման տարեկան հաշվետվության և Կազմակերպության տարեկան գործունեության մասին հաշվետվության նախագծերը, համաժողովում քննարկումից և գնահատումից հետո եռօրյա ժամկետում հրապարակում հաշվետվությունները Մասնաճյուղի պաշտոնական կայքում,
 - 12) քննարկում է Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը,
 - 13) համակարգում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը,
 - 14) ապահովում է սույն կանոնադրությունում և Կազմակերպության կանոնակարգերում ու կարգերում առաջարկվող փոփոխությունների ու լրացումների, ինչպես նաև՝ համաժողովի հաստատմանը ներկայացվող կանոնակարգերի և կարգերի, Կազմակերպության գործունեության ծրագրի և տարեկան նախահաշվի նախագծերի մասին Կազմակերպության անդամների իրազեկումը, անհրաժեշտության դեպքում կազմակերպում նրանց հետ քննարկումներ,
 - 15) ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման նախագահի և (կամ) կառուցվածքային ստորաբաժանման ժողովի սույն կանոնադրության խախտմամբ ընդունված որոշումները,
 - 16) Կազմակերպության նախագահի լիազորության ժամկետով իր կազմից ընտրում է արհկոմիտեի (Կազմակերպության) քարտուղարին, վաղաժամկետ դադարեցնում նրա լիազորությունները:

Կազմակերպության քարտուղարը կազմում է համաժողովի և արհկոմիտեի նիստերի արձանագրությունները, ստորագրում արձանագրությունները, որոշումները և արձանագրություններից քաղվածքները, սահմանված ժամկետներում ու կարգով պահպանում է արձանագրությունները և որոշումները, ինչպես նաև իրականացնում սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

- 17) կատարում է աշխատանքի բաժանում արհկոմիտեի անդամների միջև,
- 18) քննարկում է Կազմակերպությանն անդամակցելու մասին աշխատողի դիմումը և ընդունում համապատասխան որոշում,
- 19) Կազմակերպության անդամի դիմումի համաձայն դադարեցնում է նրա անդամակցությունը,
- 20) ընդունում է որոշում Կազմակերպության անդամի անդամակցության դադարեցման մասին,
- 21) իրականացնում է Կազմակերպության անդամների հաշվառումը (ներառյալ՝ էլեկտրոնային),
- 22) իր իրավասության սահմաններում տնօրինում է Կազմակերպության գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները), ընդունում Կազմակերպության անունից գործարքներ կնքելու մասին որոշումներ,
- 23) ընդունում է որոշումներ 100 000 ՀՀ դրամի սահմանաչափը չգերազանցող պայմանագրերի կնքման մասին,
- 24) իրականացնում է Կազմակերպության ֆինանսական միջոցների օպերատիվ հաշվառումը և հաշվապահական հաշվառման իրականացման նկատմամբ ընթացիկ վերահսկողությունը,
- 25) ընդունում է բանկերում Կազմակերպության հաշվարկային և այլ հաշիվներ բացելու մասին որոշումներ,
- 26) ընդունում է որոշումներ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության համապատասխան պայմանագրեր ու համաձայնագրեր կնքելու մասին,
- 27) կազմակերպում է անդամավճարների գանձման գործընթացը,
- 28) Մասնաճյուղի հետ կոլեկտիվ պայմանագրի կնքելու դեպքում պայմանագրի մշակման ժամանակ ներկայացնում և պաշտպանում է Կազմակերպության անդամների շահերը, Կազմակերպության անդամների հետ կազմակերպում պայմանագրի նախագծի քննարկումը,
- 29) համաժողովի որոշմամբ օրենքով սահմանված կարգով կազմակերպում և անց է կացնում հավաքներ, գործադուլներ և հանրային միջոցառումներ,
- 30) սահմանված կարգով ընդունում է Կազմակերպության անդամներին դրամական օգնություն տրամադրելու մասին որոշումներ, նրանց համար կազմակերպում և իրականացնում առողջարաններում և հանգստյան տներում բուժման ու հանգստի, սոցիալական օգնության ծրագրեր, մշակութային, մարզական և այլ միջոցառումներ,
- 31) համաժողովի օրը Կազմակերպության նախագահի բացակայության դեպքում ընդունում է որոշում սույն կանոնադրության 66-րդ կետի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 27-րդ ենթակետերով սահմանված Կազմակերպության նախագահի լիազորությունների իրականացումն այդ օրը արհկոմիտեի անդամներից մեկին հանձնարարելու մասին,
- 32) Կազմակերպության նախագահի 30 օրից ավելի բացակայության դեպքում (բացառությամբ՝ հերթական արձակուրդում գտնվելը) ընդունում է որոշում ժամանակավորապես Կազմակերպության նախագահի պարտականությունների կատարումը արհկոմիտեի անդամներից մեկին հանձնարարելու մասին,
- 33) համաժողովի քննարկմանն է ներկայացնում Կազմակերպության անդամների խրախուսման և կարգապահական տույժի ենթարկման հարցերը,
- 34) ներկայացնում է աշխատողների շահերը և պաշտպանում նրանց իրավունքները Մասնաճյուղի կառավարման մարմիններում, պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և այլ կազմակերպություններում ու մարմիններում,
- 35) իր իրավասությանը համապատասխան ներկայացնում է առաջարկներ Մասնաճյուղի կառավարման մարմիններին,
- 36) անհրաժեշտության դեպքում մասնակցում է աշխատողների աշխատանքային,

- մասնագիտական, սոցիալական և տնտեսական շահերը շոշափող Մասնաճյուղի ներքին իրավական ակտերի մշակման և փորձաքննական աշխատանքներին,
- 37) կառուցվածքային ստորաբաժանման կողմից արհկոմիտեի անդամի ետ կանչի, արհկոմիտեի անդամի կառուցվածքային ստորաբաժանման փոփոխության, լիազորությունների դադարեցման մասին արհկոմիտեի անդամի դիմումի, անդամակցությունը դադարեցված լինելու կամ Կազմակերպությունից հեռացման դեպքերում ընդունում է որոշում արհկոմիտեի կազմի փոփոխության օրակարգի նախագծով արտահերթ համաժողով հրավիրելու մասին,
- 38) քննարկում է Կազմակերպության անդամների և կառուցվածքային ստորաբաժանումների դիմումներն ու բողոքները,
- 39) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված և Կազմակերպության մյուս մարմիններին սույն կանոնադրությամբ չվերապահված այլ լիազորություններ:
53. Արհկոմիտեի նիստը կարող է անցկացվել նաև էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև՝ հարցման միջոցով:
54. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով արկոմիտեն իր իրավասությունների սահմաններում որոշում կարող է ընդունել ցանկացած հարցի վերաբերյալ, բացառությամբ՝ Կազմակերպության նախագահին անվստահություն հայտնելու և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցի վերաբերյալ:
55. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով արկոմիտեի նիստը համարվում է իրավազոր, եթե քննարկվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում են ներկայացրել արկոմիտեի անդամների առնվազն 2/3-ը:
56. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ արհկոմիտեի նիստ գումարելու նպատակով Կազմակերպության նախագահի առաջարկությամբ Կազմակերպության քարտուղարը էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ արհկոմիտեի նիստի անցկացման ժամկետի և օրակարգի նախագծի վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում արհկոմիտեի անդամներին՝ կցելով դիտարկվող հարցերի վերաբերյալ առաջարկվող որոշման նախագծերը և անհրաժեշտ հիմնավորումները:
57. Հարցման միջոցով արկոմիտեի նիստ գումարելու դեպքում Կազմակերպության քարտուղարը արկոմիտեի անդամներին նիստի օրակարգին, որոշման նախագծին, ինչպես նաև անհրաժեշտ հիմնավորումներին ծանոթացնում է հարցման ընթացքում:
58. Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով արկոմիտեի նիստի անցկացման դեպքում արկոմիտեի անդամը ներկայացված հարցերի վերաբերյալ կարող է քվեարկել՝ «Կողմ», «Դեմ» կամ «Ձեռնպահ», որի հիմքով Կազմակերպության քարտուղարը կազմում է արձանագրություն: Որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:
59. Անհրաժեշտության դեպքում Կազմակերպության նախագահի որոշմամբ կարող է գումարվել արհկոմիտեի հրատապ նիստ: Հրատապ նիստի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին արհկոմիտեի անդամները տեղեկացվում են նիստից առնվազն երեք ժամ առաջ:
60. Արհկոմիտեի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են Կազմակերպության միջոցների հաշվին:
61. Մեկ տարվա ընթացքում արհկոմիտեի նիստերին ավելի քան երեք անգամ չմասնակցելու դեպքում Կազմակերպության նախագահն իրավունք ունի արհկոմիտեի անդամի փոփոխության հարցով հրավիրել արտահերթ համաժողով: Արհկոմիտեի նոր անդամը պետք է լինի նույն կառուցվածքային ստորաբաժանումից:

62. Կազմակերպության նախագահին ընտրվում է համաժողովում՝ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից երաշխավորված թեկնածուներից, փակ (զաղտնի) քվեարկությամբ, համաժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով:
63. Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կարող է երաշխավորվել Կազմակերպության ցանկացած անդամ, բացառությամբ՝ Մասնաճյուղի ղեկավար պաշտոնատար անձիք և Կազմակերպության այն անդամները, որոնց հիմնական աշխատավայրը չի հանդիսանում Մասնաճյուղը:
64. Կառուցվածքային ստորաբաժանման կողմից երաշխավորվող թեկնածուն կարող է լինել նաև այլ կառուցվածքային ստորաբաժանումից:
65. Մեկ թեկնածուի քվեարկվելու դեպքում, թեկնածուն ընտրվում է Կազմակերպության նախագահ, եթե կողմ է քվեարկել համաժողովի մասնակիցների առնվազն 2/3-ը:
66. Կազմակերպության նախագահը, ով նաև արհկոմիտեի նախագահն է (գործադիր մարմնի ղեկավարը).
 - 1) կազմակերպում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը,
 - 2) հրավիրում է համաժողով՝ բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի,
 - 3) սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում հրավիրում է կառուցվածքային ստորաբաժանման ժողով,
 - 4) իրականացնում է համաժողովի և արհկոմիտեի նիստերի նախապատրաստական աշխատանքները,
 - 5) նախագահում է համաժողովը՝ բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի,
 - 6) հրավիրում է արհկոմի նիստեր, նախագահում նիստերը, իր բացակայության դեպքում նիստը նախագահելը հանձնարարում արհկոմիտեի անդամներից մեկին,
 - 7) ընդունում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված որոշումներ,
 - 8) արհկոմիտեի անունից համաժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության կանոնակարգերը և կարգերը, սույն կանոնադրությունում և Կազմակերպության կանոնակարգերում ու կարգերում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները,
 - 9) արհկոմիտեի անունից համաժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության տարեկան բյուջեի նախահաշվի նախագիծն ու բյուջեի կատարողականը, բյուջեի նախահաշվում փոփոխությունների նախագիծը,
 - 10) արհկոմիտեի անունից համաժողովի քննարկմանն ու գնահատմանն է ներկայացնում Կազմակերպության գործունեության մասին տարեկան հաշվետվությունը, համաժողովի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության սեփականության օգտագործման տարեկան հաշվետվությունը,
 - 11) կազմակերպում է Կազմակերպության գործավարությունը, Կազմակերպության անդամների հաշվառումը, Կազմակերպության փաստաթղթերի պահպանումն ու արխիվացումը,
 - 12) ստորագրում է համաժողովի և արհկոմիտեի նիստերի արձանագրությունները, որոշումները, արձանագրություններից քաղվածքները,
 - 13) կազմակերպում և իրագործում է համաժողովի և արհկոմիտեի որոշումների, սույն կանոնադրության պահանջների կատարումը,
 - 14) համակարգում է արհկոմիտեի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները,
 - 15) Մասնաճյուղի հետ հարաբերություններում ներկայացնում ու պաշտպանում է Կազմակերպության և նրա անդամների շահերը,
 - 16) ներկայացնում ու պաշտպանում է Կազմակերպության և նրա անդամների շահերը

- պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններում ու կազմակերպություններում,
- 17) Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի,
 - 18) Կազմակերպության անունից տալիս է լիազորագրեր,
 - 19) Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության համապատասխան Կազմակերպության անունից կնքում է գործարքներ, պայմանագրեր և համաձայնագրեր,
 - 20) արհկոմիտեի որոշմամբ բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային և այլ հաշիվներ,
 - 21) տեղեկացնում է արհկոմիտեին իր կողմից արած հայտարարությունների, բանակցությունների արդյունքների մասին,
 - 22) ընդունում է Կազմակերպության անդամության վերաբերյալ դիմումները և ներկայացնում արհկոմիտեի քննարկմանը,
 - 23) հաշվառումից հանում է անդամակցությունը դադարեցված կամ Կազմակերպությունից հեռացված անդամներին,
 - 24) ընդունում է Կազմակերպության անդամների և կառուցվածքային ստորաբաժանումների դիմումներն ու բողոքները, ներկայացնում դրանք արհկոմիտեի քննարկմանը,
 - 25) ապահովում է Մասնաճյուղի պաշտոնական կայքում Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկատվության, Կազմակերպության սեփականության օգտագործման տարեկան հաշվետվության և Կազմակերպության տարեկան գործունեության մասին հաշվետվության հրապարակումը,
 - 26) համակարգում է սույն կանոնադրությունում և Կազմակերպության կանոնակարգերում ու կարգերում առաջարկվող փոփոխությունների ու լրացումների, ինչպես նաև՝ համաժողովի հաստատմանը ներկայացվող կանոնակարգերի և կարգերի, Կազմակերպության տարեկան բյուջեի նախահաշվի նախագծերի, կոլեկտիվ պայմանագրի նախագծի մասին Կազմակերպության անդամների իրազեկման, նրանց հետ քննարկումների (անհրաժեշտության դեպքում) կազմակերպման աշխատանքները,
 - 27) արհկոմիտեի անունից համաժողովի քննարկմանն է ներկայացնում Կազմակերպության անդամների խրախուսման և կարգապահական տույժի ենթարկման հարցերը,
 - 28) համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում հաշվետու է արհկոմիտեին:
67. Կազմակերպության նախագահի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են Կազմակերպության միջոցների հաշվին:

Վ Ե Ր Ա Հ Ս Կ Ի Չ Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ

68. Կազմակերպության վերահսկողություն իրականացնող մարմինը՝ Վերահսկիչ հանձնաժողովը, ստեղծվում է Կազմակերպության կանոնադրական և ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:
69. Վերահսկիչ հանձնաժողովը մշտական գործող կոլեգիալ մարմին է, որի կազմը բաղկացած է 3 հոգուց և հաստատվում է համաժողովում, արհկոմիտեի կազմի հետ համատեղ, բաց քվեարկությամբ՝ երկու տարի ժամկետով, յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանումից մեկական ներկայացուցիչ սկզբունքով:
70. Կառուցվածքային ստորաբաժանման կողմից Վերահսկիչ հանձնաժողովի անդամի ետ կանչի, Վերահսկիչ հանձնաժողովի անդամի կառուցվածքային ստորաբաժանման փոփոխության, լիազորությունների դադարեցման մասին Վերահսկիչ հանձնաժողովի անդամի դիմումի, անդամակցությունը դադարեցված լինելու կամ Կազմակերպությունից հեռացման դեպքերում Վերահսկիչ հանձնաժողովն ընդունում է որոշում Վերահսկիչ հանձնաժողովի կազմի փոփոխության օրակարգի նախագծով արտահերթ համաժողով հրավիրելու համար Կազմակերպության նախագահին առաջարկ ներկայացնելու մասին:
71. Վերահսկիչ հանձնաժողովը հաշվետու է համաժողովին:

72. Վերահսկիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Կազմակերպության նախագահը, արհկոմիտեի անդամները, Մասնաճյուղի ղեկավար պաշտոնատար անձիք և Կազմակերպության այն անդամները, որոնց հիմնական աշխատավայրը չի հանդիսանում Մասնաճյուղը:
73. Կազմի հաստատման օրը Վերահսկիչ հանձնաժողովը գումարում է առաջին նիստը և բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ իր կազմից ընտրում Վերահսկիչ հանձնաժողովի նախագահ:
74. Վերահսկիչ հանձնաժողովն ինքնուրույն է որոշում նիստերի և ստուգումների անցկացման պարբերականությունը, ստուգումների իրականացման կարգը: Ստուգումներն իրականացվում են տարեկան մեկ անգամից ոչ պակաս պարբերականությամբ:
75. Նիստերը հրավիրվում են Վերահսկիչ հանձնաժողովի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ կամ Վերահսկիչ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի պահանջով:
76. Վերահսկիչ հանձնաժողովի նախագահը նիստի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին Վերահսկիչ հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է նիստից առնվազն երեք օր առաջ:
77. Վերահսկիչ հանձնաժողովի նախագահը նիստ հրավիրելու մասին պահանջն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:
78. Վերահսկիչ հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:
79. Նիստում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:
80. Վերահսկիչ հանձնաժողովի նիստերը արձանագրվում են:
81. Վերահսկիչ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները ստորագրում են Վերահսկիչ հանձնաժողովի բոլոր անդամները, իսկ որոշումները և արձանագրություններից քաղվածքները՝ Վերահսկիչ հանձնաժողովի նախագահը:
82. Կազմակերպության կանոնադրական և ֆինանսական գործունեության ստուգումների վերաբերյալ հաշվետվությունը ստորագրում են Վերահսկիչ հանձնաժողովի բոլոր անդամները, և Վերահսկիչ հանձնաժողովի նախագահը ներկայացնում է այն համաժողովի քննարկմանը:
83. Վերահսկիչ հանձնաժողովը.
 - 1) իրականացնում է Կազմակերպության նախագահի և արհկոմիտեի ընթացիկ գործունեության և նրանց կողմից սույն կանոնադրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը,
 - 2) վերահսկում է համաժողովի և արհկոմիտեի որոշումների կատարումը,
 - 3) իրականացնում է Կազմակերպության ֆինանսական և նյութական միջոցների ճիշտ և արդյունավետ օգտագործման նկատմամբ վերահսկողությունը,
 - 4) անց է կացնում արհկոմիտեի ֆինանսատնտեսական գործունեության, Կազմակերպության միջոցների և նյութական արժեքների հաշվապահական հաշվառման ու պահպանման, նախահաշիվների կազմման և կատարման, կատարված ծախսերի նպատակահարմարության, ֆինանսական և այլ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության փաստաթղթային ստուգում,
 - 5) ստուգում է Կազմակերպության բյուջեի կատարումը և Կազմակերպության անդամավճարների ու սույն կանոնադրությամբ նախատեսված այլ եկամուտների ժամանակին փոխանցումը,
 - 6) ստուգում է Կազմակերպության գույքի փաստացի առկայությունը,
 - 7) վերահսկում է Կազմակերպության գործավարության, Կազմակերպության անդամների հաշվառման, Կազմակերպության փաստաթղթերի պահպանման ու արխիվացման ճիշտ կազմակերպումն ու իրականացումը,
 - 8) իրականացնում է Կազմակերպության անդամների և կառուցվածքային ստորաբաժանումների դիմումների և բողոքների ժամանակին դիտարկման նկատմամբ վերահսկողությունը,

- 9) իրականացված ընթացիկ սուուգումների արդյունքների մասին տեղեկացնում է արհկոմիտեին,
 - 10) կազմում է Կազմակերպության կանոնադրական և ֆինանսական գործունեության սուուգումների վերաբերյալ հաշվետվությունը և ընդունում որոշում այն համաժողովի քննարկմանը ներկայացնելու մասին,
 - 11) համաժողովում Կազմակերպության կանոնադրական և ֆինանսական գործունեության սուուգումների վերաբերյալ հաշվետվության քննարկումից հետո եռօրյա ժամկետում հրապարակում այն Մասնաճյուղի պաշտոնական կայքում:
84. Վերահսկիչ հանձնաժողովի և արհկոմիտեի միջև տարաձայնությունները քննարկվում և լուծվում են համաժողովի կողմից:
 85. Համաժողովն իրավասու է վաղաժամկետ դադարեցնել Վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունները, եթե այն ներկայացրել է Կազմակերպության կանոնադրական և ֆինանսական գործունեության սուուգումների վերաբերյալ ոչ օբյեկտիվ հաշվետվություն:
 86. Վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են Կազմակերպության միջոցների հաշվին:

Վ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱՐՀԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Կազմակերպության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը համաժողովի կողմից.

87. Կազմակերպության նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են համաժողովի որոշմամբ, եթե նա.
 - 1) թույլ է տվել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և (կամ) սույն կանոնադրության խախտում(ներ),
 - 2) ներկայացրել է դրա մասին դիմում արկոմիտեին,
 - 3) նշանակվել է ղեկավար պաշտոնի,
 - 4) ընտրվել է ղեկավար պաշտոնում,
 - 5) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,
 - 6) դադարեցվել է նրա անդամակցությունը կամ հեռացվել է Կազմակերպությունից,
 - 7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած:
88. Սույն կանոնադրության 87-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով Կազմակերպության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման օրակարգով համաժողովի գումարման կարգը.
 - 1) Կազմակերպության նախագահին հիմնավորված անվսահություն հայտնելու և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին գրավոր պահանջը ներկայացվում է Կազմակերպության նախագահին՝ արհկոմիտեի անդամների կամ Կազմակերպության անդամների առնվազն 1/3-ի կամ կառուցվածքային ստորաբաժանումներից առնվազն մեկի կողմից, կամ, սուուգումների արդյունքում, Վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ՝ Վերահսկիչ հանձնաժողովի նախագահի կողմից,
 - 2) Կազմակերպության նախագահը պահանջն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում պարտավոր է հրավիրել արտահերթ համաժողով,
 - 3) արտահերթ համաժողովի օրակարգի նախագծի, անցկացման տեղի և ժամկետի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են համաժողովից առնվազն երեք օր առաջ,

- 4) համաժողովը քննարկում է օրակարգային հարցը և կայացնում համապատասխան որոշում:
89. Կազմակերպության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում համաժողովը կայացնում է որոշում Կազմակերպության նախագահի պարտականությունների կատարումը ժամանակավորապես արհկոմիտեի ամենատարեց անդամին հանձնարարելու և Կազմակերպության նախագահի ընտրություններ անցկացնելու օրակարգով երկշաբաթյա ժամկետում արտահերթ համաժողով հրավիրելու մասին:
- Համաժողովի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են համաժողովից առնվազն մեկ շաբաթ առաջ, իսկ համաժողովը նախագահում է արհկոմիտեի ամենատարեց անդամը:
90. Սույն կանոնադրության 87-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերի հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում Կազմակերպության քարտուղարը Կազմակերպության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և Կազմակերպության նոր նախագահի ընտրություններ անցկացնելու օրակարգով արտահերթ համաժողով հրավիրում է երկշաբաթյա ժամկետում:
- Արտահերթ համաժողովի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են համաժողովից առնվազն մեկ շաբաթ առաջ, իսկ համաժողովը նախագահում է արհկոմիտեի ամենատարեց անդամը:

Արհկոմիտեի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը համաժողովի կողմից.

91. Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և (կամ) սույն կանոնադրության խախտումը կարող են հիմք հանդիսանալ համաժողովի կողմից արհկոմիտեի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման ու արտահերթ ընտրությունների անցկացման համար:
92. Սույն կանոնադրության 91-րդ կետի հիմքով արհկոմիտեի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման օրակարգով համաժողովի գումարման և արհկոմիտեի նոր կազմի հաստատման օրակարգով արտահերթ համաժողով գումարելու կարգը.
- 1) արհկոմիտեին հիմնավորված անվստահություն հայտնելու և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին գրավոր պահանջը կարող է ներկայացվել Կազմակերպության նախագահին Կազմակերպության անդամների առնվազն 1/3-ի կամ կառուցվածքային ստորաբաժանումներից առնվազն մեկի կողմից, կամ, ստուգումների արդյունքում, Վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ՝ Վերահսկիչ հանձնաժողովի նախագահի կողմից,
 - 2) Կազմակերպության նախագահը պահանջն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում պարտավոր է հրավիրել արտահերթ համաժողով,
 - 3) արհկոմիտեին հիմնավորված անվստահություն հայտնելու օրակարգով արտահերթ համաժողով կարող է հրավիրել նաև Կազմակերպության նախագահը,
 - 4) արտահերթ համաժողովի օրակարգի նախագծի, անցկացման տեղի և ժամկետի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են համաժողովից առնվազն երեք օր առաջ,
 - 5) համաժողովը քննարկում է օրակարգային հարցը և կայացնում համապատասխան որոշում:
93. Արհկոմիտեի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում համաժողովը կայացնում է որոշում արհկոմիտեի նոր կազմի հաստատման օրակարգով երկշաբաթյա ժամկետում արտահերթ համաժողով հրավիրելու մասին:
94. Համաժողովի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են համաժողովից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Կազմակերպության նախագահի և արհկոմիտեի լիազորությունների ինքնաբերաբար դադարեցումը.

95. Անհաղթահարելի ուժի ազդեցության (ֆորս-մաժոր) բացակայության ժամանակ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում և ժամկետներում համաժողով չհրավիրելու, օրենքով ու սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետներում Կազմակերպության տարեկան հաշվետվությունները չհրապարակելու դեպքերում Կազմակերպության նախագահի և արհկոմիտեի լիազորությունները ինքնաբերաբար համարվում են դադարեցված:

Նման իրավիճակում ստեղծվում է նախաձեռնող խումբ (3-ից 5 հոգի), որը Կազմակերպության նախագահի ընտրության և արհկոմիտեի կազմի հաստատման օրակարգով երկշաբաթյա ժամկետում հրավիրում է արտահերթ համաժողով:

Համաժողովի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին Կազմակերպության անդամները տեղեկացվում են համաժողովից առնվազն մեկ շաբաթ առաջ, իսկ համաժողովը նախագահում է Կազմակերպության ամենատարեց անդամը:

VI. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱՔԱԺԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

96. Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման կառավարման կոլեգիալ մարմինը կառուցվածքային ստորաբաժանման ժողովն է (այսուհետ՝ ժողով), որը հրավիրվում է ըստ անհրաժեշտության:

97. Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է կառուցվածքային ստորաբաժանման նախագահը, ով ընտրվում է փակ (գաղտնի) քվեարկությամբ, ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով: Կառուցվածքային ստորաբաժանման նախագահ չեն կարող ընտրվել Մասնաճյուղի ղեկավար պաշտոնատար անձիք և Կազմակերպության այն անդամները, որոնց հիմնական աշխատավայրը չի հանդիսանում Մասնաճյուղը:

98. Ժողովը հրավիրվում է կառուցվածքային ստորաբաժանման նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ կամ կառուցվածքային ստորաբաժանման անդամների 1/3-ի պահանջով:

99. Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքում կառուցվածքային ստորաբաժանման ժողով հրավիրում է Կազմակերպության նախագահը:

100. Կառուցվածքային ստորաբաժանման նախագահը ժողովի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին կառուցվածքային ստորաբաժանման անդամներին տեղեկացնում է ժողովից առնվազն երեք օր առաջ:

101. Կառուցվածքային ստորաբաժանման նախագահը ժողով հրավիրելու մասին պահանջն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պարտավոր է ապահովել ժողովի գումարումը:

102. Ժողովը համարվում է իրավազոր՝ նրա անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:

103. Ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ժողովը չի ընդունում որոշում փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու մասին:

104. Ժողովը արձանագրվում է: Ժողովի արձանագրությունները, որոշումները, արձանագրություններից քաղվածքները ստորագրում են կառուցվածքային ստորաբաժանման նախագահը և ժողովի քարտուղարը, ով բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ ընտրվում է ներկաների կողմից:

105. Ժողովը՝

- 1) հաստատում է իր օրակարգը և աշխատակարգը,
- 2) ընտրում է կառուցվածքային ստորաբաժանման նախագահին,
- 3) անհրաժեշտության դեպքում կատարում է աշխատանքի բաժանում կառուցվածքային ստորաբաժանման անդամների միջև,

- 4) կառուցվածքային ստորաբաժանման կողմից երաշխավորում է Կազմակերպության նախագահի թեկնածուի,
 - 5) արհկոմիտեի կազմում ընդգրկվելու համար առաջադրում է կառուցվածքային ստորաբաժանման ներկայացուցիչների,
 - 6) Վերասկիչ հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար առաջադրում է կառուցվածքային ստորաբաժանման ներկայացուցչի,
 - 7) վաղաժամկետ դադարեցնում է կառուցվածքային ստորաբաժանման նախագահի լիազորությունները,
 - 8) ներկայացնում է պահանջ (առաջարկություն) Կազմակերպության արտահերթ համաժողով և (կամ) արհկոմիտեի նիստ հրավիրելու մասին,
 - 9) քննարկում և ներկայացնում է առաջարկություններ՝ սույն կանոնադրությունում առաջարկվող փոփոխությունների ու լրացումների, Կազմակերպության կանոնակարգերի և կարգերի, կանոնակարգերում և կարգերում առաջարկվող փոփոխությունների ու լրացումների, Կազմակերպության տարեկան բյուջեի նախահաշվի նախագծի, կոլեկտիվ պայմանագրի նախագծերի վերաբերյալ,
 - 10) իրականացնում է կառուցվածքային ստորաբաժանման մակարդակով կոլեկտիվ և անհատական աշխատանքային վեճերի քննարկում և ներկայացնում առաջարկներ դրանց լուծման վերաբերյալ,
 - 11) ընդունում է որոշում Կազմակերպության նախագահի և արհկոմիտեի սույն կանոնադրության խախտմամբ ընդունված որոշումները բողոքարկելու մասին,
 - 12) անհրաժեշտության դեպքում ընդունում է համապատասխան որոշում կառուցվածքային ստորաբաժանման մակարդակով աշխատողների աշխատանքային, մասնագիտական, սոցիալական և տնտեսական շահերը շոշափող ներքին իրավական ակտերի մասին,
 - 13) կարող է ներկայացնել կարծիք Կազմակերպության նախագահի և արհկոմիտեի տարեկան գործունեության մասին,
 - 14) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված և Կազմակերպության մյուս մարմիններին սույն կանոնադրությամբ չվերապահված այլ լիազորություններ:
106. Կառուցվածքային ստորաբաժանման նախագահը՝
- 1) կազմակերպում և համակարգում է կառուցվածքային ստորաբաժանման ընթացիկ գործունեությունը,
 - 2) հրավիրում է ժողովներ,
 - 3) իրականացնում է ժողովների նախապատրաստական աշխատանքները,
 - 4) նախագահում է ժողովը՝ բացառությամբ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի,
 - 5) ընդունում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված որոշումներ,
 - 6) կազմակերպում է կառուցվածքային ստորաբաժանման գործավարությունը, կառուցվածքային ստորաբաժանման անդամների հաշվառումը, կառուցվածքային ստորաբաժանման փաստաթղթերի պահպանումն ու արխիվացումը,
 - 7) ապահովում է կառուցվածքային ստորաբաժանման անդամների մասնակցությունը արհկոմիտեի կազմակերպած միջոցառումներին,
 - 8) կազմակերպում և իրագործում է համաժողովի, արհկոմիտեի և կառուցվածքային ստորաբաժանման ժողովի որոշումների, սույն կանոնադրության պահանջների կատարումը,
 - 9) կառուցվածքային ստորաբաժանման մակարդակով Մասնաճյուղի հետ հարաբերություններում ներկայացնում և պաշտպանում է կառուցվածքային ստորաբաժանման անդամների շահերը,
 - 10) ներկայացնում և պաշտպանում է կառուցվածքային ստորաբաժանման և նրա անդամների շահերը Կազմակերպության մարմիններում,
 - 11) անմիջական հաշվետու է Կազմակերպության նախագահին, արհկոմիտեին և կառուցվածքային ստորաբաժանման ժողովին:

107. Կառուցվածքային ստորաբաժանման նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են կառուցվածքային ստորաբաժանման ժողովի որոշմամբ, եթե նա.
- 1) թույլ է տվել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և (կամ) սույն կանոնադրության խախտում(ներ),
 - 2) ներկայացրել է դրա մասին դիմում Կազմակերպության նախագահին,
 - 3) նշանակվել է ղեկավար պաշտոնի,
 - 4) ընտրվել է ղեկավար պաշտոնում,
 - 5) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,
 - 6) դադարեցվել է նրա անդամակցությունը կամ հեռացվել Կազմակերպությունից,
 - 7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած:
108. Սույն կանոնադրության 107-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով կառուցվածքային ստորաբաժանման նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման օրակարգով ժողովի գումարման կարգը.
- 1) կառուցվածքային ստորաբաժանման նախագահը՝ կառուցվածքային ստորաբաժանման անդամների առնվազն 1/3-ի անունից իրեն հիմնավորված անվսահություն հայտնելու և իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու օրակարգով արտահերթ ժողով հրավիրելու մասին գրավոր պահանջն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պարտավոր է հրավիրել արտահերթ ժողով,
 - 2) ժողովի օրակարգի նախագծի, անցկացման տեղի և ժամկետի մասին կառուցվածքային ստորաբաժանման անդամները տեղեկացվում են ժողովից առնվազն երկու օր առաջ,
 - 3) ժողովը քննարկում է օրակարգային հարցը և կայացնում համապատասխան որոշում,
 - 4) կառուցվածքային ստորաբաժանման նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ նույն ժողովում ընտրվում է կառուցվածքային ստորաբաժանման նոր նախագահ:
109. Սույն կանոնադրության 107-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերի հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում Կազմակերպության նախագահը կառուցվածքային ստորաբաժանման նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և կառուցվածքային ստորաբաժանման նոր նախագահի ընտրություններ անցկացնելու օրակարգով արտահերթ ժողով հրավիրում է մեկշաբաթյա ժամկետում:
- Արտահերթ ժողովի օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին կառուցվածքային ստորաբաժանման անդամները տեղեկացվում են ժողովից առնվազն երեք օր առաջ, իսկ ժողովը նախագահում է կառուցվածքային ստորաբաժանման ամենատարեց անդամը:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

110. Կազմակերպության անդամ կարող է լինել Մասնաճյուղի հետ աշխատանքային պայմանագիր կնքած ցանկացած աշխատող, ում հիմնական հիմնական կամ համատեղությամբ աշխատանքի աշխատավայրը հանդիսանում է Մասնաճյուղը և ով ընդունում է սույն կանոնադրությունը, սահմանված չափով և ժամկետներում մուծում է մուտքի վճարը և անդամավճարը:
111. Կազմակերպությունում գործում է Կազմակերպության անդամ դառնալու և անդամակցությունից դուրս գալու միասնական կարգ:
112. Կազմակերպությանն անդամակցելը.
- 1) Աշխատողը Կազմակերպությանն անդամակցելու մասին դիմումը ներկայացնում է Կազմակերպության նախագահին:
 - 2) Արհկոմիտեն Կազմակերպությանն անդամակցելու մասին դիմումը քննարկում է հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

- 3) Աշխատողը համարվում է Կազմակերպության անդամ՝ արհկոմիտեի կողմից այդ մասին որոշում ընդունելու պահից:
 - 4) Կազմակերպությունում ընդունելու մասին որոշման պատճենը Կազմակերպության քարուղարը երկու աշխատանքային օրերի ընթացքում տրամադրում է աշխատողին:
 - 5) Որոշման պատճենը ստանալու օրն աշխատողն անկանխիկ եղանակով մուծում է սույն կանոնադրությամբ սահմանված մուտքի վճարը և տնօրենին ներկայացնում իր անդամավճարը գանձելու և Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու մասին դիմում՝ կցելով արհկոմիտեի որոշման պատճենը:
 - 6) Կազմակերպությանն անդամակցելու մասին դիմումը մերժվելու դեպքում աշխատողը կարող է կրկին դիմել առնվազն երեք ամիս հետո: Դիմումը մերժելու մասին արհկոմիտեի որոշումը պետք է լինի հիմնավորված, և աշխատողին երկու աշխատանքային օրերի ընթացքում գրավոր տրամադրվի մերժման հիմքերը:
 - 7) Կազմակերպության անդամին կարող է տրվել անդամատոմս:
113. Կազմակերպությանն անդամակցության դադարեցումն անձնական դիմումի համաձայն.
- 1) Կազմակերպության անդամը Կազմակերպությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնում է Կազմակերպության նախագահին:
 - 2) Արհկոմիտեն Կազմակերպության անդամի դիմումի համաձայն հինգ աշխատանքային օրերի ընթացքում դադարեցնում է նրա անդամակցությունը:
 - 3) Աշխատողի անդամակցությունը համարվում է դադարեցված՝ Կազմակերպության նախագահին ներկայացրած դիմումի օրվանից:
 - 4) Կազմակերպության նախագահին դիմում ներկայացնելու օրն աշխատողը տնօրենին է ներկայացնում իր անդամավճարի գանձումը դադարեցնելու մասին դիմումը:
114. Կազմակերպությանն անդամակցության դադարեցումն արհկոմիտեի որոշմամբ.
- 1) Կազմակերպության անդամի հիմնական աշխատավայրի փոփոխության կամ Մասնաճյուղի հետ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերում Կազմակերպության նախագահը հնգօրյա ժամկետում արհկոմիտեի քննարկմանն է ներկայացնում նրա անդամակցության դադարեցման հարցը՝ ներկայացնելով համապատասխան հիմքերը:
 - 2) Աշխատողի անդամակցությունը համարվում է դադարեցված՝ արհկոմիտեի կողմից այդ մասին որոշում ընդունելու պահից:
 - 3) Անդամակցության դադարեցման մասին որոշման ընդունումից հետո Կազմակերպության նախագահը երկու աշխատանքային օրերի ընթացքում Կազմակերպության նախկին անդամի անդամավճարի գանձման դադարեցման մասին համապատասխան գրությամբ դիմում է տնօրենին՝ կցելով արհկոմիտեի որոշման պատճենը:
115. Կազմակերպության անդամներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ:
116. Կազմակերպության անդամն իրավունք ունի.
- 1) դիմել արհկոմիտեին, Կազմակերպության նախագահին և կառուցվածքային ստորաբաժանման նախագահին իր աշխատանքային, մասնագիտական, սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության հարցերով,
 - 2) սույն կանոնադրությանը համապատասխան ընդգրվել արհկոմիտեի և Վերահսկիչ հանձնաժողովի կազմերում,
 - 3) սույն կանոնադրությանը համապատասխան ընտրվել Կազմակերպության նախագահ և կառուցվածքային ստորաբաժանման նախագահ,
 - 4) մասնակցել Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի քննարկմանն ու լուծմանը, Կազմակերպության ծրագրերի մշակմանը,
 - 5) Կազմակերպության քննարկմանը ներկայացնել Կազմակերպության գործունեությանն առնչվող փաստաթղթերի նախագծեր, առաջարկություններ, ստանալ դրանց վերաբերյալ կարծիքներ և որոշումներ,
 - 6) իր շահերին առնչվող հարցերի քննարկման ժամանակ մասնակցել արհկոմիտեի

- նիստերին,
- 7) սահմանված կարգով Կազմակերպության միջոցներից ստանալ դրամական օգնություն, օգտվել Կազմակերպության կողմից կազմակերպվող և իրականացվող բուժման, հանգստի և սոցիալական օգնության ծրագրերից, մասնակցել Կազմակերպության մշակութային, մարզական և այլ միջոցառումներին,
 - 8) ստանալ Կազմակերպության գործունեության (ներառյալ՝ ֆինանսական) մասին ցանկացած տեղեկատվություն,
 - 9) սույն կանոնադրությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները:
117. Կազմակերպության անդամը պարտավոր է.
- 1) պահպանել և կատարել սույն կանոնադրության և Կազմակերպության ներքին իրավական ակտերի պահանջները,
 - 2) իր գործունեությամբ նպաստել Կազմակերպության ծրագրերի իրականացմանը, Կազմակերպության հեղինակության բարձրացմանը,
 - 3) չիրականացնել այնպիսի գործողություն, որը կարող է վնաս հասցնել Կազմակերպությանը կամ հակասել սույն կանոնադրությանը,
 - 4) աջակցել Կազմակերպության մարմինների՝ սույն կանոնադրությանը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող որոշումների իրականացմանը,
 - 5) մասնակցել համաժողովի և կառուցվածքային ստորաբաժանման ժողովի նիստերին,
 - 6) արհկոմիտեի կամ Վերահսկիչ հանձնաժողովի կազում ընդգրկված լինելու դեպքում՝ պատշաճ իրականացնել իր պարտականությունները,
 - 7) սույն կանոնադրությամբ սահմանված չափով և ժամկետներում մուծել մուտքի վճարը և անդամավճարը,
 - 8) Կազմակերպության անդամների իրավունքների և շահերի պաշտպանության ժամանակ ցուցաբերել փոխադարձ համերաշխություն,
 - 9) կատարել Կազմակերպության կողմից կնքված կոլեկտիվ պայմանագրով և այլ պայմանագրերով, համաձայնագրերով նախատեսված իր պարտականությունները:
118. Կազմակերպության գործունեությանն ակտիվ մասնակցելու համար Կազմակերպության անդամները կարող են սահմանված կարգով ներկայացվել խրախուսման, ինչպես նաև արհկոմիտեի որոշմամբ պարգևատրվել Կազմակերպության շնորհակալագրով և պատվոգրով:
119. Կանոնադրական պարտականությունները չկատարելու, Կազմակերպության ներքին իրավական ակտերի պահանջները չպահպանելու և չկատարելու դեպքերում Կազմակերպության անդամի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ Կազմակերպությունից հեռացնելու մասին նախազգուշացում, Կազմակերպությունից հեռացում:
120. Աշխատողին Կազմակերպությունից հեռացման մասին համաժողովի որոշման ընդունումից հետո Կազմակերպության նախագահը երկու աշխատանքային օրերի ընթացքում Կազմակերպության նախկին անդամի անդամավճարի գանձման դադարեցման մասին համապատասխան գրությամբ դիմում է տնօրենին՝ կցելով համաժողովի որոշման պատճենը:
121. Կազմակերպությունից հեռացված աշխատողը կարող է Կազմակերպությանը կրկին անդամակցելու մասին դիմում ներկայացվել համաժողովի համապատասխան որոշման օրվանից առնվազն մեկ տարի հետո:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ, ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ

122. Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելը տեղի են ունենում համա-

- ժողովի որոշմամբ, եթե կողմ է քվեարկել համաժողովի մասնակիցների առնվազն 2/3-ը:
123. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցումն իրականացվում են իրավաբանական անձանց գրանցման համար օրենքով սահմանված կարգով:

IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

124. Կազմակերպության սեփականությունը գոյանում է Կազմակերպության անդամների մուտքի վճարներից և անդամավճարներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց, իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպությունների կամավոր ներդրումներից, նվիրատվություններից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
125. Կազմակերպության անդամության մուտքի վճարի չափը սահմանվում է 1000 ՀՀ դրամի չափով:
126. Կազմակերպության ամսական անդամավճարի չափը սահմանվում է Մասնաճյուղում աշխատողի ամսական աշխատավարձի 0,85 տոկոսի չափով:
127. Մուտքի վճարը և անդամավճարը մուծվում են անկանխիկ եղանակով:
128. Անդամավճարի մուծումը կատարվում է Մասնաճյուղի հետ համաձայնեցված կարգով՝ Կազմակերպության անդամի դիմումի առկայության դեպքում՝ նրա ամսական աշխատավարձի 0,85 տոկոսը փոխանցելով Կազմակերպության հաշվարկային հաշվին:
129. Կազմակերպությունը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր սեփականությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
130. Կազմակերպությունն իր ֆինանսական միջոցները ծախսում է համաժողովի կողմից օրացուցային տարվա համար հաստատված նախահաշվի հիման վրա՝ Կազմակերպության անդամներին դրամական օգնություն տրամադրելու և նրանց խրախուսելու, Կազմակերպության անդամների համար առողջարաններում և հանգստյան տներում բուժման ու հանգստի, սոցիալական օգնության ծրագրեր, մշակութային, մարզական և այլ միջոցառումներ կազմակերպելու ու իրականացնելու, ինչպես նաև համաժողովի և (կամ) արհկոմիտեի որոշմամբ՝ սույն կանոնադրությանը համապատասխան իր գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսեր կատարելու նպատակով:
131. Կազմակերպության գույքի օտարումը կատարվում է համաժողովի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
132. Կազմակերպությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում, համաժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում իր սեփականության օգտագործման տարեկան հաշվետվությունը և հրապարակում այն Մասնաճյուղի պաշտոնական կայքում:

X. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

133. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) իրականացվում է նրա համաժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:
134. Կազմակերպության վերակազմակերպման մասին համաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել համաժողովի մասնակիցների առնվազն 2/3-ը:
135. Կազմակերպության լուծարումը տեղի է ունենում համաժողովի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով:
136. Կազմակերպության լուծարման մասին համաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել համաժողովի մասնակիցների առնվազն 2/3-ը: